

ԴԱԻԻԹ ԵՒ ՀՐԵՏԱԿ

ՀՈՎՈՒՆԵՐԳՈՒԹԻՒՆ



ՄԻՆՁ մարգարէն խաշնադարման
Հովուէր ըզհօտ իւր տակաւին,
Ու արքունի ճետն հանգըրուանին
Ունէր ըզցուպ ի գաւազան,
Ասեն, թէ գայր երբեմն հրեշտակ
Առ նա խօսել զնորայն փառաց,
Եւ զնուագս երգոց յաղթականաց
Խառնէր ի ձայն իւր անուշակ:
Յանկարծ նոցին նըւագք գողարիկ
Հընչեցին շուրջ յանոյշ գանգիւն.
Եւ սիրաշունչ զեփիւռ մեղմիկ
Մընչէր զըւարթ զերգըս նոցուն:

ԴԱԻԻԹ

Ողջոյն, սիրո՛ւնդ ինձ, գեղեցիկդ ի զուարթունս:

ՀՐԵՏԱԿ

Ողջոյն մանուկ երկնի'ց սիրուն:

ԴԱԻԻԹ

Գ.ա՛ս գու կըրթել զիս յԱնմահին գովութիւնս
Եւ քաղցրաձայն պարուց ի նուագ գերաբուն:
Այլ պատմութեան զքե տեսանեմ հրաշահիւս,
Ուր հովուականքն երբեմն ըզգեստը շողային.
Զի՞նչ իցէ այդ՝ զոր ձեռամբդ ինձ կարկառուս
Աղէ խօսեաց, պատգամաբերդ երկնային:

ՀՐԵՏԱԿ

Ուրախ լեր, այս քո՛ է պըսակ.
Նըշուպարդ՝ օր մ'իբրեւ զիս,
Օր մի, երկնից այս են հրամանք,
Մանուկ հովիւ, արքայ լիցիս.
Աստուած սիրող անմեղութեան
Կազմէ մական քումըդ ձեռին,
Իւ գու զինեալ քաջ ախոյեան
Կործանեսցես զփրըշտացին:

ԴԱԻԻԹ

Ընդ հօրս յարկաւ և ծերունին Սամուէլ,
Եկն՝ որպէս դուդ՝ կանխաձայնել մեծութիւնս.
Ոյր թաղծագէմ՝ երեսք և աչք յարտասուս՝
Զարբայից կեանս դառն ինձ ետուն գուշակել:
Ո՛վ գեղեցիկ զուարթուն, դարձի՛ր ի յերկին,
Առ որ պաշտեմն Աստուած՝ դարձո՛ զայդ ջինջ թագ.
Սըրտին իմոյ լըցեալ են իղձք և փափաքք,
Վեհ քան զարբայ՝ զի ժառանգեմ զսէր նորին:

ՀՐԵՏԱԿ

Ձեռք որ պահեն ըզհէգ խըրճիթ,
Պահեն և զտունս թագաւորաց.
Աչք Աստուծոյ յարբայս անթիթ՝
Որ քոց անսան սուրբ օրինաց:
Հընչէ ի փառսըդ քո, Սիոն,
Եւ հոյք զուարթնոց ահա երկնից
Յոսկի քընարս մարգարէից՝
Ըզյաղթականդ երգեն զանուն:

ԴԱԻԻԹ

Տեսի զՍաւուղ պերճ արքունեաց քաղցր ի գիւր՝
Նախանձ բերել հըպատակացն ընդ նըսեհ,
Ի յաղթութեանն ի գիւրկ տեսի զնա տըխուր.
Ասեն այս չար ի սիրտ նորա բընակէ,
Քանի՞ցս անգամ ցնորիցն ի դուլ, եղկելին
Եղև կարօտ իմոյ քնարիս նըւագաց.
Արտասուք իւր քանի՞ցս ասել թըւէին
Էի և ես հովիւ, աւանդ, գու միշտ կաց:
Գուցէ և զիս Երկինք յիւրում բարկութեան
Հրէից ժանտից ի պատուհաս ամբառնայ.
Եւ հի՞մ գհանգիստ իմ խանդան, ո՛հ, զի՛նչ մեղայ,
Ելի՞ յայացն իմ Աստուծոյն սիրական,
Ո՛չ հանապաղ իբրև զԱբէլ գեռափթիթ
Ընծայեցի սերտիւ ձօնիս բարեպաշտ.
Ո՛չ հանապաղ ես ի խաշանցս անվրտիտ
Երախայրիս հանի՝ սեղան իւր ի յաշտ:

ՀՐԵՏԱԿ

Են են թագին իւր քաղցրութիւնք
Արբայի՝ յոր երկինք չընչեն.
Անբոյթ ազին խինդք անուշունք
Դիւրել ըզվիշտըս քաջ գիտեն,
Լեր ապաւէն անմեղութեան,
Ցամաքեցո՛ զարտօսը որբոյն,

Եւ քաղցր հանգիստըն մանկական
 Փայլեսցի յաշարդ շողշողուն :
 Յաւուր միում ի բունդ յուռթի
 Բողբոջեսցի վեհ գաւազան :
 Օր մի... այլ շղոտ իսկ ապագայն
 Տայցէ պատգամն քե աշխարհի :
 Արի՛, քեզ ակն ունի Յուդաս,
 Ե՛կ ժառանգել ըզքո ստացուած .
 Ե՛կ ի վրէժ Տեառն անարգանաց
 Յարեան պըղծոյն բարիատեսց :

Դ Ա Ի Ի Թ

Եւ ի՞բր հընար մանկան կըռուել զնորուն մարտ ,
 Ջունի՛ զայլ ոք իւրոց փառաց նախանձոտ .
 Իսկ թէ՛ նա ի՛նքն է որ կոչէն՝ կամ հնազանդ .
 Այլ յի՛նչ բաւակ իցէ երկշոտ անդիորդ :
 Հարքստահար ընդդէմ՝ բազկաց աննըւէր՝
 Անմեղութիւն ևեթ են իմ և աղօթք .
 Թէ՛ զիս մանուկս՝ Երկինք մարտից սահմանէր ,
 Մի՛ թէ ծածկէ՛ր հովուականօքն ընդ յարկօք :

Հ Ր Ե Շ Տ Ա Կ

Որ աղտեղի տըղմոյն ի գայու
 Բուսուցանէն չըքնաղ շուշան ,
 Նա և ի հիւղ գիտէ խոնարհ
 Բուսուցանել հըզօր մական .
 Որդեակ իմ, Տեառն է այս հրաման ,
 Տես ըզգոյշ կաց , լեր հըպատակ .
 Մեռանել յոնձն առ իսահակ .
 Իշխեա՛, մարտի՛ր թէ կամի նայն :

Դ Ա Ի Ի Թ

Հարկ արդ թողուլ է զձեզ , ո՞վ ցուպ , խաչանց պար ,
 Դաւարագեղ մարդք և դադարք հանգըստեան .
 Մըշտազըւարճ ափու՛ք և գաշտք Բեթլեմեան
 Զորոց մոգեաց գանգիւնս բազմիցս իմ , քընար :
 Բայց եթէ կրել հարկ անհրաժեշտ է ինձ թագ ,
 Ու Աստուծոյն բան ճեպէ լինել զիս արքայ ,
 Գայցէս՝ իբր աստ՝ բազմել առ իս , ճն , աստ ,
 Երգել ընդ իս՝ թողեալ զգուարթնոց պերճ դասակ :

Հ Ր Ե Շ Տ Ա Կ

Ըզքե զըստուեր թեոցս արկից ,
 Միշտ ի քեզ աչք իմ լիցին բաց ,
 Հաւատարիմ պէս աղանեաց
 Թանոյշ արդիւնս իւրեանց տարփից .

Որդեակ իմ երթ, երթ անգանդադ,
Գընա՛ զգետնել զփըղըշտացին,
Ա՛ռ պարսաւտիկ քո և զմախաղ,
Ե՛ս ուղղեցիք զբազուկ քոյին :

Եւ վերացաւ Զուարթունն իբրեւ զամպ թեթեւ :
Երգ ի բերան անդէն հովիւք բազմաբիւր
Նոր արքային մընչեն մաղթանս սիրաթեւ .
Եւ գեղափթիթ մարգին ի յարկ ծաղկաստեւ
Լընուն ըզծոց նորա պըսակօք քաղցրաբոյր :

Ի սիրային վայրըս սըրտին,
Յանտառս՝ ուր ստէպ գիշերախառն հասանէր,
Ուր նըւագէր յաճախ ցըմուտս արեգին .
« Հատորք հոգւոյս, ասէր, հիւզ՝ ի՛մ ծնընդավայր
Լնկալարուք զմորմոք սըրտիս, զհուսկն ողջոյն .

Անգ ի գահոյս, աչք ի՛մ տըժգոյն
Ո՛ր գիտէ զձեզ լացցեն յերկար » :

Թրգմ. Հ. Արսէն Ղազիկեան

Դիւրբեօյ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Կարմրուկ . — Մեղուններն կը համբարեն
միշտ աւելի քան զպատս գեղուն, որով կը
կերակրեն թրթուրները յունվարէ սկսեալ :
Քայց բեղնոյ այն մասը՝ որ դրուած է հե-
ռաւոր բլիթներուն մէջ, բացակայ բնակու-
թեան կեդրոնէն, թողուելով կը կարծրանայ,
կը տարրաբաշխի, և թթուելով անյարմար
կ'ըլլայ սննդեան, և յայնժամ փոխելով իր
անունը կոշի կարմրոռի, կարմիր գունոյն
համար զոր կը ստանայ :

Եթէ բազմաթիւ է մեղուաց ընտանիքը,
շուտով կը մաքրեն կարմրուկը, կրծելով բը-
շիթները որոց մէջ դիզուած է : Քայց այս
աշխատութեան յայնժամ կը դիմեն, երբ իւ-
րենց բնակութեան տեղը նեղ գայ թրթուր-
ները բազմացնելու համար :

Կընամք դարնան սկիզբը դիւրաւ ճանչել
խորսխին այն մասը՝ որ կարմրուկով լցեալ է .
վասն զի սովորաբար թեթեւ մզլոտութիւն մը
կը ծածկէ երեսը : Լաւ է վերցնել այս դար-
չելի նիւթը, զործաւոր մեղուաց աշխատու-
թիւնը խնայելու համար :

Ալանամում . — Ականամումն է ռեանային
նիւթ մը, հոծ, կաշուն, որ կը կակղնայ տա-
քութեան ժամանակ, և կ'ըլլայ չոր ու բե-
կանուտ ցրտութեամբ . իր գոյնն է թխորակ
կամ կարմրորակ, զոր կը ժողվեն մեղուններն
աղէկ եղանակի մէջ, և մանաւանդ ամառան
վերջերը, ծառոց պտուկներէն և կեղևէն, և
բեղնոյ պէս կծիկ ընելով կը բերեն ի փե-
թակ : Առատ ականամում տուող ծառերն՝
են կաղամախ, սափ, հաւամրգի, կնձի,